



ՀԲՄ-Ն ՈՐՊԵՍ ԿԱՍՈՒՐՁ ԲԱՆԿԵՐԻ և ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ

04.10.2013



Բանկային համակարգի և անշարժ գույքի ուղիղ և անմիջական կապն ակնհայտ է: Հիփոթեքային վարկերը, անշարժ գույքի հետ գործարքները, դրանց կշիռը բանկերի ակտիվների ընդհանուր պորտֆելի մեջ, գրավադրված անշարժ գույքն ու վերջինիս հետ կապված անշարժ գույքի օբյեկտների արդար գնահատման անհրաժեշտությունը և այլն: Այս

ամենը հաշվի առնելով, պատահական չէ Հայաստանի ամենափորձված բանկիրներից մեկի՝ Մամվել Ճզմաչյանի, նախաձեռնությամբ նոր՝ Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) նախագահի պաշտոնում, «Օլիվեր Գրուպ» ազդեցիկ գնահատման գործակալության հետ համագործակցության հուշագրի ստորագրումը:

Համաձայն այդ փաստաթղթի, «Օլիվեր Գրուպ»-ը պարտավորվում է անհատույց հիմքի վրա ՀԲՄ-ին տրամադրել Հայաստանի անշարժ գույքի վերաբերյալ եռամսյակային մանրամասն հետազոտություններ, իսկ միությունը, իր հերթին, դեմ չէ կիսվել ընկերության հետ ընդհանրացված բանկային տեղեկություններով, օրինակ, անշարժ գույքի գրավադրմամբ հատկացված վարկերի քանակի, այդ թվում՝ իրացված օբյեկտների վերաբերյալ: Մի խոսքով, օգտակար տեղեկությունների ակտիվ փոխանակումը երաշխավորված է:

«Մենք մտադրված ենք ուղարկել «Օլիվեր Գրուպ»-ի հետազոտությունները Հայաստանում գործող բոլոր առևտրային բանկերին, որպեսզի նրանք տնօրինեն լիակատար ինֆորմացիայով անշարժ գույքի շուկայի դրության վերաբերյալ և համապատասխանաբար ընդունեն արդյունավետ որոշումներ» - ՀԲՄ-ի կենտրոնատեղում Հուշագրի ստորագրման արարողության ժամանակ ասաց Սամվել Ճզմաչյանը:

Իր հերթին, «Օլիվեր Գրուպ»-ի գլխավոր տնօրեն Արա Ադուրյանը հայտնեց ընկերության մասին, որ այն սպասարկում է անշարժ գույքի գնահատման առումով երկրի ֆինանսա-բանկային հատվածի երկու երրորդը և իրենց համար մեծ պատիվ է աջակցել բանկային համակարգի հետագա ամրապնդմանը և կայունությանը: «Մենք կփորձենք դարձնել անշարժ գույքի շուկան, առավել ևս՝ առաջարկների հատվածը, ավելի ճանաչելի բանկերի համար, - հայտարարեց Ա. Ադուրյանը: - Բացի դրանից, չեմ թաքցնի, որ մեր ընկերության համար այս համագործակցությունը կարևոր է նաև իմիջի տեսանկյունից»:

Հավելենք նաև, որ, համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի պահանջների, Հայաստանում ամեն մի բանկ սուբյեկտիվ դրսևորումներից խուսափելու համար պետք է օգտվի առնվազն հինգ գնահատող ընկերությունների ծառայություններից (և նույն քանակի ապահովագրական կազմակերպություններից), չնայած, ինչպես նկատեց Ս. Ճզմաչյանը, գործնականում շատ բանկեր աշխատում են և՛ 10, և՛ 15 ընկերությունների հետ, որպեսզի խուսափեն, օրինակ, այնպիսի իրավիճակներից, երբ միևնույն անշարժ գույքի օբյեկտի գնահատման արդյունքները, որոնք ստացվել են տարբեր գնահատող ընկերությունների կողմից, տարբերվում են իրարից 2-3 անգամ:

ԵՐԿՈՒ ՕՐ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15-16.10.2013



Հայաստանի տարածքում գործող առևտրային բանկերի կողմից պարբերաբար բարձրացվում են «Կրկնակի հարկումը բացառելու» հետ կապված հարցեր: Հայաստանի

բանկերի միությունը (ՀԲՄ) դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնին բանկերին հետաքրքրող խնդիրների թեմայով դասընթաց կազմակերպելու համար, նպատակ ունենալով իրազեկել այդ հարցերի շուրջ բանկերի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչներին:

Ինչպես և սպասվում էր, միջոցառումը մեծ հետաքրքրություն առաջացրեց, ինչի մասին է վկայում այն փաստը, որ դրան իրենց մասնակցությունն ունեցան 16 առևտրային բանկերի 26 համապատասխան մասնագետներ: Երկու օրվա ընթացքում՝ հոկտեմբերի 15 և 16 (օրական 3 ժամ, աշխատանքային ժամերից հետո՝ 18:00-ից մինչև 21:00-ը) նրանք խորամուխ էին լինում Հայաստանի Հանրապետության այլ պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Կիպրոսի և այլնի, հետ ստորագրված եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին միջպետական համաձայնագրերին:

Մասնավորապես, անդրադարձ կատարվեց «ոչ ռեզիդենտ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում «մշտական հաստատության» միջոցով ծառայությունների մատուցում» հասկացությանը, տոկոսների, շահաբաժինների, առևտրային գործունեությունից ստացված եկամուտների հարկմանը, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական համաձայնագրի փոփոխություններին:

Բացի դրանից, դասընթացի մասնակիցների ուշադրությունը հրավիրվել է ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտների շահութահարկով և ԱԱՀ-ով հարկման առանձնահատկություններին:

Անկասկած, հիմա կրկնակի հարկման վերաբերյալ հարցերը բանկային համապատասխան ծառայողների մոտ էապես նվազել են:

ԳՈՒՄԱՐԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

25.10.2013



Երևանի “Golden Palace” հյուրանոցում անցկացվեց «Հայաստան + Աշխարհ 2013» խոշոր միջազգային բիզնես կոնֆերանսը նախապատրաստող խորհրդի 1-ին նիստը: Կոնֆերանսն ինքը կկայանա ս.թ. դեկտեմբերի 9-11, Երևանում, «Էմփայր» բիզնեսի աջակցման կենտրոնի նախաձեռնությամբ, ինչից մի քանի ամիս հետո կկազմակերպվի նաև ունիվերսալ ցուցահանդես: Միջոցառման կազմակերպիչներն, իրենց խոսքերով, արդեն հասել են պայմանավորվածությունների Yahoo-ի և Google-ի մակարդակի արտասահմանյան ներդրողների հետ՝ հայկական ֆորումին մասնակցելու վերաբերյալ: Միջոցառման կարևոր նպատակներից մեկն է մասշտաբային ներդրումների հաշվին վերակենդանացնել Հայաստանի արտադրական ներուժը:

Միջոցառման կազմակերպչական մարմնի կազմում ընդգրկված է նաև ՀԲՄ-ի ներկայացուցիչը: Ի դեպ, միության նախագահ Սամվել Ճզմաչյանն ուղերձ է հղել էքսպո կոնֆերանսի կազմակերպիչներին և մասնակիցներին (տես www.expoarmenia.am), որում Հայաստանում գործող բոլոր 21 բանկերի անունից պատրաստակամություն է հայտնել աջակցել այն բոլոր նախաձեռնություններին, որոնք ուղղված կլինեն Հայաստանի տնտեսության զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և արտագաղթի կասեցմանը:

Կազմակերպչական խորհրդի 1-ին նիստին վերջնականապես հաստատվեց նրա կազմը, ինչպես նաև քննարկվեցին անցկացվելիք կոնֆերանսի և էքսպոյի ժամկետներին և օրակարգին վերաբերող հարցեր: Խորհրդի քարտուղար ընտրվեց «Էմփայր» բիզնեսի աջակցման կենտրոնի տնօրեն, միջազգային բիզնես կոնֆերանսի ծրագրի ղեկավար Փոյա Հոսսեյնին:

ԲԱՆԿԻՐՆԵՐԸ ՎԻԵՆԱՅՈՒՄ

26.10.2013



Հայաստանի բանկերի միությունը, ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ, ս.թ. հոկտեմբերի 26-ին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում բանկերի ղեկավարների համար կազմակերպել էր սեմինար «Ռիսկերի կառավարում» թեմայով:

Միջոցառումը պատշաճ կազմակերպելու նպատակով ՀԲՄ-ն նախապես դիմել էր բանկերի ղեկավարներին, որպեսզի նրանք մինչև Ավստրիա մեկնումը միությանը տրամադրեն այն թեմաների ցանկը, որոնք կցանկանային քննարկման առարկա դարձնել սեմինարի ժամանակ:

Միջոցառմանն իր մասնակցությունն է ունեցել նաև ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյանը, ում հետ քննարկվել են համակարգային կարևորություն ունեցող հարցեր:

Բանկիրները հաջորդ օրը վերադարձել են Հայաստան:

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

01-31.10.2013



Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 1-ից Հայաստանում մեկնարկել է ավանդական ակցիան՝ «Իմ ֆինանսների միամսյակ» ծրագիրը, որը կտևի մինչև ամսվա վերջ:

Ինչպես իր խոսքում ՀՀ ԿԲ-ում միամսյակի բացման արարողության ժամանակ նշեց Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը, «ծրագրի շրջանակներում իրականացվող այս մասշտաբային միջոցառումները նախատեսված են գրավել հասարակության

ուշադրությունը անձնական միջոցների կառավարման հարցերին և, ընդհանուր առմամբ, բարձրացնել ֆինանսների կառավարման վերաբերյալ տեղեկացվածությունը»:

Միջոցառումների շարքում էին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (հոկտեմբերի 11) և Հայաստանի Ամերիկյան համալսարանի (հոկտեմբերի 15 և 17) առաջին կուրսի ուսանողների հետ անցկացված սեմինարները, որոնց ներկա են գտնվել Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի, ՀՀ Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի ներկայացուցիչներ:

Ուսանողների հետ հանդիպումների ընթացքում բանկերի ներկայացուցիչները ներկայացրել են ավանդների ներգրավման իրենց բանկերի քաղաքականությունը, դրա շրջանակներում առաջարկվող ավանդային և խնայողություններ ներգրավելու այլ գործիքներ, ինչպես նաև տրամադրել են ավանդների վերաբերյալ ամփոփագրեր և այլ նյութեր:

Հայտնենք նաև, որ միամսյակն ավարտվում է հոկտեմբերի 31-ին, երբ նշվում է նաև Խնայողությունների համաշխարհային օրը: Այդ օրը ՀՀ բանկերի մեծ մասը հանրությանը կներկայացնեն դրան նվիրված իրենց հատուկ առաջարկները, կտրամադրեն խորհուրդներ խնայողություններ անելու և դրանք կառավարելու ճիշտ տարբերակների մասին:

Բացի դրանից, հոկտեմբերի վերջին օրը կկայանա հայտարարված մրցույթների հաղթողների պարգևատրման արարողությունը, իսկ որևէ մարդաշատ վայրում կկազմակերպվի եզրափակիչ բացօթյա էքսպո: Եվ վերջապես, հասարակությունը հնարավորություն կունենա մասնակցելու այսպես կոչված «Երազանքների պատի» կառուցմանը: Մարդաշատ վայրում (Հյուսիսային պողոտա, ք. Երևան) ՀԲՄ-ն կտեղադրի ստենդ, որի վրա կլինեն անցքեր: Պատահական անցորդները հնարավորություն կունենան գրել իրենց ցանկությունները հատուկ պատրաստված թղթերի վրա և տեղադրել դրանք այդ անցքերում: Արդյունքում կստացվի միասնական կառուցած պատկեր՝ օրինակ, այն կարող է ունենալ դրամի տեսք:

.....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: